ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2021-Ա « 17 » ապրիլի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԿԻԵՎՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲՆԱՑՔ Հ.14 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐԻՆԵ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ, ՎԱՐՍԵՆԻԿ ՀՐԱՉԻԿԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ, ՌՈՒԲԵՆ ԴԻՄԻՏՐՈՎԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵՎ ՆԱՐԻՆԱ ԲԻԴՐՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մարինե Կարապետի Մամիկոնյանի (ծնված 21.12.1960թ.), Վարսենիկ Հրաչիկի Մամիկոնյանի (ծնված 10.04.1960թ.), Ռուբեն Դմիտրիի Պետրոսյանի (ծնված 03.07.1964թ.) և Նարինա Բիդրոսյանի (ծնված 05.05.1969թ.) դիմումը (15.02.2019թ. հ.Մ-1649): Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կիևյան փողոց 2-րդ նրբանցք հ.14 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 728.0քմ, որից պահպանված է 533.33քմ, որը Մարինե Կարապետի Մամիկոնյանին, Վարսենիկ Հրաչիկի Մամիկոնյանին, Ռուբեն Դմիտրիի Պետրոսյանին և Նարինա Բիդրոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (ժառանգության վկայագրեր 29.09.2003թ. հ.19547, 28.04.2006թ. հ.6301, 28.04.2006թ. հ.6300, 04.09.2012թ. հ.5796):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 15.11.2023թ հ.ԱՏ-15112023-01-0787, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 14.11.2022թ. հ.14236 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 03.04.2026թ. հ.20-Ել-Մ-1649 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կիևյան փողոց 2-րդ նրբանցք հ.14 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կիևյան փողոց 2-րդ նրբանցք հ.14 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մարինե Կարապետի Մամիկոնյանի, Վարսենիկ Հրաչիկի Մամիկոնյանի, Ռուբեն Դմիտրիի Պետրոսյանի և Նարինա Բիդրոսյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 533.33քմ մակերեսով հողամասին կից

77.08քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 77.08քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կիևյան փողոց 2-րդ նրբանցք հ.14 հասցեում գտնվող 610.41քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ